

նաեւ Ս. Լուսաւորիչ նուէր պիտի հաւաքէր (1766). եւ որովհետեւ տրամադրելի սենեակ չկար, Սարգիս իր սենեակն անոր տուաւ եւ ինք Միջագիւղ գնաց, ուր եկեղեցին սենեակ չունենալուն, Պատրիարքն անոր համար տուն մը վարձեց, ուր Սարգիս ամառը բնակեցաւ: Սարգիս տեղւոյն եկեղեցւոյն մէջ ամէն Կիրակի կը քարոզէր, նոյն տեղ ընակող բազմաթիւ իշխաններ զինք շատ կը յարգէին, մանաւանդ Չօպանեանք եւ Սիմէոն Աստուածատուբան: Պէշիկթաշի ազգայինք ալ, որ եկեղեցի չունէին, Սարգսի քարոզին կու գային:

Եամին 1771 Սիմէոն Կաթողիկոսն Էջմիածնի ուղեց զՍարգիս իւր նուիրակն ընել ի Կ. Պօլիս. իր այս կամքն յայտնեց Չաքարիա Ա. ի, որ այն ատեն նուիրակ էր Էջմիածնի, եւ հրամայեց որ այս մասին խօսի Սարգսին հետ: Սակայն Սարգիս ձերութիւնը պատճառելով հրաժարեցաւ: Տարի մ'ետքը Սարգիս եկեղեցւոյն երէցները սաստեց գործուած անկարգութեան մը համար, որուն անոնք բարկանալով եւ կողմնակից գտնելով՝ Սարգսի դէմ Պատրիարքին ամբաստանութիւն գրեցին: Բայց Գրիգոր Պատրիարք քննելով անոնց արարքը՝ յանդիմանեց զիրենք, եւ հրամայեց Սարգսին անսալ, որոնք Սարգսէն ներում խնդրեցին:

Սարգիս վերջապէս կը խորհէր դարձեալ Եւրոպա երթալ, եւ Հոռոմ անցընել իր վերջին օրերը. բայց Տաճկաց եւ Ռուսաց պատերազմը, իւր գրքերուն անվաճառ մնալն արգելք կ'ըլ-